ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 հունիսի 2023 թվականի N 427 -Ա

Գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՍԿԵՀԱՍԿ ԳՅՈՒՂԻ 1-ԻՆ ՓՈՂՈՑ 65 ՀԱՍՑԵԻ 08-092-0061-0006 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Զոյա Աշոտի Մակարյանը (ծնված 01/06/1959 թվական) դիմել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարին՝ բաժնային սեփականության իրավունքով իրենց ընտանիքին պատկանող 08-092-0061-0006 կադաստրային ծածկագրով, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,3349 հեկտար մակերեսով հողամասի վրա առկա, ինքնակամ համարվող բնակելի նշանակության շինություններն օրինական ճանաչելու խնդրանքով:

Բաժնային սեփականության իրավունքով Զոյա Աշոտի Մակարյանին, Հովիկ, Քրիստինե և Բելլա Գրիշայի Մանուկյաններին պատկանող, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ոսկեհասկ գյուղի 1-ին փողոց, 65 հասցեի հողամասի վրա գտնվող, ինքնակամ կառույց համարվող 162,85 քառակուսի մետր ընդհանուր ներքին մակերեսով բնակելի տունը, բաց պատշգամբը, աստիճանահարթակը և 97,53 քառակուսի մետր ընդհանուր ներքին մակերեսով օժանդակ շինությունները կառուցվել են 1965-1990 թվականներին (2001 թվականի մայիսի 15-ից առաջ): Ինքնակամ կառույցները կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք: Ինքնակամ կառույցները հաշվառված են Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեում թիվ 2023GGD3ZR ծածկագրով:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 6-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հունվարի 5-ի թիվ 14-Ն որոշման 2-րդ կետի, «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի թիվ 912-Ն որոշման 1-ին և 4-րդ կետերի դրույթներով,

համաձայն նույն որոշման կարգի 8-րդ, 10-րդ, 11-րդ կետերի և 22.1 կետի դրույթներով որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ոսկեհասկ գյուղի 1-ին փողոց, 65 հասցեի հողամասի վրա ինքնակամ կառուցված 162,85 քառակուսի մետր ընդհանուր ներքին մակերեսով բնակելի տունը, բաց պատշգամբը, աստիճանահարթակը և 97,53 քառակուսի մետր ընդհանուր ներքին մակերեսով օժանդակ շինությունները համարել օրինական՝ առանց վճարների գանձման:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անշարժ գույքի բաժնային սեփականատերերին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:
3. Գույքային իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա.ԻԳԻԹՅԱՆ**

«02» հունիսի 2023 թվական
գյուղ Ախուրյան